բանկում եղած 556 ռ. 23 կ. առ 26 ապրիլի %-ը 47 ռ. 38 կ., ընդամէնն 6361 ռ. 59+47 ռ. 38 կ.=6409 ռ. որն աւելացնելով առ 15 ապրիլի կազմած դրամագլխի վերայ առ 26 ապրիլի 1914 թ. կազմում է հինգ հարիւր երկու հազար վեց հարիւր քսան և ինն ռուբլի 62 կոպէկ (502629 ռուբլի 62 կոպ.)։

Այդ յիշեալ 502629 ռուբլի 62 կոպէկ դրամագլուխը կազմուած է հետևեալ գումարներից՝

	Ռ.	Կ.
1. Տան արժողութիւնը	100000	—
2. Բանկերում տարով պահ տուած գումարներ .	235000	—
3. Ընթացիկ հաշուով բանկերում դրուած . .	14597	69
4. Արժէթղթեր պահ տուած Ազովо-Դոնեան բանկում	70470	—
5. Ակցիա Բագուի մեքենայաշինութեան ընկերութ.	1500	—
6. Անյոյս մուրհակներ	55739	75
7. Տփխիսի պետական գանձարանի անդորրագիր .	16385	60
8. 85000 ռուբլու 31-ն յունուարի 1914 թ. % (ապառիկ բանկի վրայ)	303	93
9. Հանգուցեալի ոսկեղէն և արծաթեղէն իրերը .	3521	03
10. Հանգուցեալի տան կահ-կարասիքները . .	5028	—
և 11. Առ ձեռն գումար	83	62
Գումար	502629	62

Այսպիսով Ղուկասեան կտակի հաշիւների գործը միանգամայն պարզուեց, կտակակատարներն էլ իրենց բարոյական պարտքը կատարեցին։ Մնում է ցանկալ մօտիկ ապագայում տեսնել հանգուցեալ ազգային մեծ բարերար Աւետիք Ղուկասեանի բարի կամքը իրագործուած, կառուցանելով Ղուկասեան-Ճեմարան գիտութեան տաճարը։ Գործը մեծ է և երախտագիտութեան արժանի։ Այժմ աւելի քան կարևոր է Ցաճկաստանում հիմնել այդ լուսոյ տաճարը ու զարկ տալ մատաղ սերնդի լուսաւորութեան սուրբ գործին։

Բ. վ. Ա.

Հանգուցեալ դերասան Պետրոս Ադամեանի իրերը

Սինօդում 1914 թ. ապրիլի 11-ին պ. Գրիգոր Զալխուշեանի միջոցաւ Նոր-Նախիջևանից ստացուել են հան-

գուցեալ Պետրոս Ադամեանին պատկանեալ հետևեալ իրերը, որոնք ուղարկուած են ս. Էջմիածնի թանգարանում գնելու.

1) Երկու բաժանմունքով արծաթեայ աղաման՝ մէջը ոսկեզօծ։
2) Մի բոլորակ արծաթեայ գդալ Ա. փորագրութեամբ.
3) Մի դանակ և պատառաքաղ արծաթեայ Ա. փորագրութեամբ.
4) Մի արծաթեայ անուշեղէնի գդալ.
5) Մի արծաթեայ ոսկեզօծ թիականման գդալ.
6) Մի արծաթեայ դանակ պատառաքաղի բարձիկ.
7) Մի արծաթեայ անձեռնոցիկի կապ. փորագր. P. Adamian 1885 avril 25 Karkoff.
9) Մի արծաթեայ գրամ 1867 թ. Լէօպոլդ II թագաւորի նկարով և վերտառութեամբ
10) Մի մեծ արծաթեայ ոսկէզօծ գաւաթ հետևեալ վերտառութեամբ. «Հայկական բեմի վերայ առաջին անգամ Համլետի դեր կատարող 1880 թ. 20 դեկտեմբերի Պ. Ադամեանին»։
11) Մի արծաթեայ մէջը ոսկեզօծ մեծ գաւաթ հետևեալ վերտառութեամբ. «Ցիշատակ ի հասարակէ Նոր-Զերկասսկի Պ. Ադամեանին 1884 թ. հոկտեմբ. 24-ին»։
12) Արծաթեայ ոսկեզօծ ծխախոտի տուփ երեսը էմալով պատկեր. միւս երեսը հետևեալ վերտառ. «П. А.» «Артисту П. І. Адамянъ отъ Московскихъ армянъ 1883 г. февраля 12».
13) Արծաթեայ տուփ ծխախոտի հետևեալ վերտառ. «П. Адамяну отъ Русской Драматической труппы 3 мая 1882 г. Тифлисъ. Режисоръ Н. Біязи». միւս երեսին նոյն արտիստական խմբի ազգանունները.
14) Ժամացոյցի ոսկեայ ծանր շղթայ մեդալիոնով, որի մի կողմը քնար, միւս կողմը Պ. Ա. և կից կնիք Պ. Ա. մէջը երդուեալ հաւատարմատար Օքոյեանի պատկերը.
15) Արծաթեայ ոսկեզօծ դոյլ խաւիարի համար հետևեալ վերտառութեամբ. «Պ. Ադամեանին Կովկասեան Հայ ձկնորսարանից. Աստրախան 1884 ամի. միւս կողքի վրայ կպցրած արծաթեայ ուսկան, մէջը ձուկ.
16) Փողպատկ զարդ—մարգարտէ բղէզ, երկու կարմիր յակինթներով, մի ոտը պոկուած։
17) Մի արծաթեայ պսակ վերտառութեամբ. «Տաղանդաւոր Պ. Ադամեանին Աստրախանայ Հայերը 1884 ամի»։
18) Թեքերի 2 զոյգ կոճակները, կապոյտ քարերով և փոքր գոհարներով զարդարուած։
19) Մի ժապաւէն։